



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Չր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Տր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԵՆԻԿ Է
Ձեռագիր ետ-չ'դար-
ձուիք

Փիիհնիկ

Կը ծախուի ԾԻԿ դրուս ուղչի

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

28 ՕԿՏՈՏՈՍ 1902

Թիի 11

ՍԵՐ ՊԱՅԿԵՐՆԵՐ

Հայտրուները. — Պայուկներուն քափօրը

Ազեքսանդրիոյ Ժողովրդային Մասեկադարան-Լաարանը մտան անցեալները 3 Անգլիացիներ, որոնց մէջն էր Պ. Վ. Պարթըն (Victor Barton). Հոն կային քանի մը հայ երիտասարդներ.

Մատենադարանին պաշտօնեան հարցուց հիւրերուն. Ի՞նչ կ'ուզէք.

— Անգլիերէն գաս կուտանք, ըսին, ձրիաբար ու մեր դպրոցը կը գտնուի նոր Մաքսատան (Nouvelle Douane) քով. դեռ սերսը չը մտած, ձախ կողմը կը գառնաք, հոն է. Ձեր մէջէն փափագողներուն պատրաստ ենք դաս աւանդել շարաթը քանի մ'անգամ.

Պ. Եամալեան, ներկայ երիտասարդներէն մին, որ տղայ տիքէն կը սիրէր անգլիերէնն ու բաւական ալ սովորած էր, պատասխանեց.

Ես կուզեմ.

— Շա՛տ լաւ ուրեմն, եթէ կ'ուզէք, երթա՛նք, ըսին ու հետերնին ուրիշ երիտասարդ մ'ալ առնելով դուրս ելան:

Գանի մը քայլ յառաջացած էին, երբ Պ. Պարթըն հարցուց մէկուն.

— Հայ էք դուք.

— Այո՛, Հայ եմ.

— Անգլիերէն չիտէ՞ք

— Է՛հ, բաւական.

— Ծնողք ունի՞ք հոս.

— Ո՛չ, մի՛նակ եմ.

— Ինչո՞վ կը պարապիք.

— Առայժմ անգործ եմ, գործ մը կը փնտռեմ.

— Օ՛, եհս, գիշերները ո՛ւր կը պառկիք.

— Որոշ տեղ մը չ'ունիմ հանգչելու.

— Հոգ չէ՛, կրնաք մեր քով մնալ ձեզի մաքուր անկողին, հագուստ ու կերակուր կուտանք, անգլիերէն կը սովորիք, Ի՞նչ կըսէք. կ'ուզէ՞ք աշակերտ ըլլալ մեզի.

Հայ երիտասարդին գրպանը պարապ էր, ինք խեղճ, ամեն միջոցէ զուրկ, հետեւաբար անգլիացի մարդասիրին այդ իւղտ խոստումներէն հրապուրուած.

— Ինչպէ՛ս, ձեր քո՞վը գամ պառկիմ, ըսաւ.

— Ի՞նչ կայ, չե՞ս ուզեր.

— Այո՛, կուզեմ, բա՛յց...

— Է՛հ ուրեմն,

— Լա՛ւ, կուգամ.

Պ. Պարթըն, թափանցող նայուած մը նետելով հայ երիտասարդին վրայ,

— Քանի՞ տարու ես, հարցուց.

— 20-22 տարու եմ.

— Կրօնքով ի՞նչ ես.

— Ամեն կրօնք մէկ է ինձ համար, Աստուած, Քրիստոս, Հոգին Սուրբ կը ճանչնամ,

— Օ՛ր եհս, վե՛րի կուս, այո՛, շատ լաւ, ճիշդ է:

Ու այսպէս, խօսակցութիւնը տեւեց մինչև որ հասան Պ. Պարթընի դըպրոցը որ կը կոչուի ամերիկեան դպրոց:

Դպրոցին մէջ օրը 4 ժամ պարապուրդ կը տրուի. մէն մի աշակերտ իր կարգին շարաթը մէկ անգամ տընտեսի, խոհարարի, ևն պաշտօններ կը կատարէ. օրը քանի մը ժամ անգլիերէն միայն կ'աւանդուի. մնացեալ ժամերը կ'անցնին աղօթքով ու աղօթքով:

Առտուան ժամը 10ին ու իրիկուան ժամը 3ին միայն կը ճաշեն, գիշերը ժամը 9 1/2 էն առաջ աղօթք մը, յետոյ թէյ. 10ին կը քնանան, առտուն կանուխ արթննալու համար: Հինգշաբթի ու շաբաթ օրերը 6 ժամ աղօթք: Աղօթքը կ'ընեն ծնկագուճ, աչքերնին գոց ու երեսնին ձեռքերով ծածկուած, միասին կ'երգեն, յետոյ մէկը կ'եղնէ երազատեսի շարժումներով կ'արտասանէ մենախօսութիւն մը, որմէ ոչ ինք բան մը կը հասկնայ, ո՛չ ալ ներկաները: —

Թէ ի՞նչպէս օր օրի կ'աւելնայ թիւը հայ աշակերտներուն, ոչոնք ձրխաբար կ'ընդունուին Ամերիկեան դպրոցը, մըտիկ ընենք հետեւեալ խօսակցութիւնը.

Բարեկամ մը. Օ՛ր, ի՞նչ խապար, ի՞նչ կընես ո՛ւր ես, ինչո՞վ կը զբաղիս:

— Սուս եղիր ծօ՛, այս տեղ ամերիկեան դպրոց մը կայ, ուր կ'ուտեմ, կը խմեմ, կը պառկիմ, անգլիերէն ալ

կը սովորիմ ու մեկ միջիեմ չեմ վճարեր, հագուստ ու կօշիկս ալ վրանին:

— Ի՞նչ կըսես, ամա՛ն, ո՛ւր է նէ ըսէ ինծի ծօ՛, ուրկէ՞ գտեր ես այդ տեղը, ծօ՛ խաչագոյ. ըսէ՛ աման, ես ալ երթամ. քովս բարս մը չը մնաց, եկեղեցին գացի, Աղքատախնամին դիմեցի, պարապ ճամբեցին... քանի օր է ծոմ բերնով փողոցները կը չափչփեմ:

— Եթէ կուզես, միասին երթանք, բայց դիտցած ըլլաս, կրօնքդ պէտք է ուրանաս, ծովը պիտի մտնես, պիտի մկրտուիս նորէն ու յետոյ... բարքեօր պիտի...:

— Ծօ՛, ի՞նչ կըսես, ի՞նչ կուզեն թող ընեն, կուզեն նէ օրը քառսուն անգամ ջուրը խոթեն հանեն, քալէ՛, հոգիդ սիրես նէ, քալէ՛ երթանք, անօթի՛ եմ: Ու կ'երթան:

Մէկ ամիս կայ որ դպրոցը բացուած է, 6-7 հայ աշակերտներ կան հսն:

Թէ ի՞նչ է Մկրտաթիւն ըսուածը, Յերեկ է. կէս օրէն ետքը ժամը 2ին, Բաս-էշ-Թիւնի պալատին ետեւը խորհրդաւոր գործողութիւն մը կը կատարուի: Տասնըհինգ մարդիկ, այր ու կին, ձեռմակներ հագած, նաւակներու մէջ մտած, ձեռքերնին գիրք, կը կարդային, բարձր ձայնով կ'երգէին: Դիտել պէտք էր ծովը. երկու հոգի ծովին մէջը կը պարէին կարծես. մէկը որ միւսին վրայ գերազանցութիւն մ'ունենալ կը թուէր, այս վերջինին մազերէն բռնած, ջուրին մէջը կը թաղէր զանի ու դուրս կը հանէր:

Առաջին դիտող մը պիտի կարծէր թէ զիրար խեղդել կ'աշխատէին: Բայց ո՞վ կրնար մտաբերել թէ՛ մազերէն բռնողը բարքեօր մըն էր որ մկրտութեան խորհուրդը կը կատարէր նորընծայի մը վրայ, որ հայ լուսաւորչական մըն էր ու բողոքական պիտի չիւուէր:

Անգամ մըն ալ վերագառնալու պայմանով, այս տխուր տեսարանը վարագուրենք ու անցնինք ուրիշ այնքան տխուր որքան ծաղրելի տեսարանի մը: —

Պապուկներուն թափօրն է, հայ պապուկներու, որոնք փողոց ինկած, երեսկախ ու շլմորած, ապարանէ ապարան գո՛ւթ կը մուրան, շոջերուն դռները ափ են առեր, կուլան կողբան ու գթութի՛ւն կը մուրան:

Պապակներո՛ւն թափօրը:

Պողոսեան երկ. վարժարանին երբեմնի անձեռնմխելիները, յանկարծ, անողոք անակնկալին մէկ հարուածովը, դուրս նետուածները. Տնօրէն, (*) հայկաբան, թուարան, վարժուհի, մեծ ու փոքր, հիմայ, թափօր մը կազմած, ամեն գնով կ'աշխատին նորէն ներս մտնել հոն, ուսկից հանուեցան:

Մէկը, մօրուեզ ծնօտը ձեռքին մէջ առած, միւսը՝ զոյգ ակնոցը քթին վրայ նստեցուցած, ուրիշ մը, պատրաստ արցունքի կաթիլներն աչքերուն մէջ, միաբուն և միակամ երեքները մերթ առանձին ու մերթ միասին, կը ներկայանան շոջի մը:

Ահա թէ ի՞նչ կը ջարդեն:

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հետեւեալը «Լ'Էօրօքէէն» Եւրօպայէրէն ազատ քարգմանութեամբ կը քաղենք Փիւնիկի Պատ. ընթերցողներուն համար:

Ամեն. Սրբ. Օրմանեան, Թուրքիոյ Հայոց Պատրիարքը զրկեց ամսայս շին իր հրատաշականը Բ. Իրան

որ հետեւեալ օրը զայն իրեն վերագարձուց մերժելով:

Երկու գլխաւոր շարժառիթներ կը վերագրուին այս հրատարականին:

1. Թուրք կառավարութիւնը դարձեալ կը շարունակէ արգելել հայերուն երթալ ո՛չ միայն արտասահման, այլ և նահանգէ նահանգ, քաղքէ քաղք, գիւղէ գիւղ և մինչև իսկ տնէ տուն, արևը մարը մտնելէ ետք:

2. Բռնի իսլամացումները, Բարձր Հայոց մէջ մանաւանդ, այնքան կը յաճախեն որ քիչ յետոյ պատրիարքի պաշտօնը լոկ անուանական ու յինծու պիտի ըլլայ իրականին մէջ:

Ահա պաշտօնական պատճառները հրատարականին, որոնք արդէն լայնօրէն կը բաւեն արդարացընել Ամեն. Օրմանեանին վերջնական որոշողութիւնը:

Հայերուն երթևեկի արգելքին համար յիշել պէտք է թէ՛ 1895-1896 մեծ ջարդերուն ատեն, 40000 հայեր ռուսական սահմանագլուխն անցան ճողոպրելու համար անմիջական խողխողումէն: Իսկ երբ արիւնի ու կրակի փոթորիկը հանդարտեցաւ, բնական էր որ անոնք փափագէին վերագառնալ իրենց տեղերը, վերստանալ իրենց լքուած հողերը: Ռուսիոյ թուրք հիւպատոսները չ'էին երբէք անցագիր տար անոնց ու եթէ մէկը յանդգնէր վերագառնալ առանց պաշտօնական թուղթին, շուտով կը բանտարկուէր. ոստիկանութեան նուէր մը տալով հայ գաղթականները տեղերնին դարձընելու հոգը վրանին առնող նաւավարները՝ ոստիկանութեան կը յանձնէին զանոնք երբ որ հասնէին նաւահանգիստ: Ռուսիոյ գաղթականներուն համար բնագաւառին ճամբան փակ էր. իսկ մոսկովեան ասպընձականութիւնը շատ խիստ է. ռուս իշխանութիւնները հեղնութիւն մը կը նետեն այն խեղճերուն Երեսին՝ ընտրել կա՛մ Թուրքիա վե-

րադարձը կամ բռնի ուսացումը, ո՛չ թէ Ռուսաց պէս բոլոր քաղաքային իրաւունքները վայելելու, այլ իշխան Կալիձինի բարեացակամ վարչութեամբ յատկացուած հոգերու վրայ գամուած իբրև ստրուկներ իրենց յաւիտենական տէրերուն ծառայելու դատապարտուած զրհեր. . . :

Գալով Թուրքիա ֆնացած Հայերուն, երթեկի արգելքը կը նշանակէ կամաց կամաց անօթութենէ մեղքները զանոնք գաւառներուն մէջ, ուր կառավարութեան ու վաշխառուներուն բանին կուգայ սովը կազմակերպել, ցորենները յափշտակել պահելով. փնացքները զանոնք, եթէ վաճառական են. բոշորովիս թշուառացիները զանոնք, եթէ պելճ կամ ուրիշ ազգէ կապալառուներու պէս ելթան քաղաքները բանիլ իբրև գործաւոր կամ արհեստաւոր: Դեռ վերջերս Մերսինէ Բրօ Արմէնիաի ուղղեալ նամակ մը կը պատմէ թէ՛ Տիգրանակերտցիներ ու Խարբերդցիներ չ'էին կրցեր Ատանա գալ աշխատելու, բաց ի Քուրտերուն հետ եկողներէն, որոնք շատ մը նեղութիւններու կը հանդիպին: Զեթունցի, Փրնուզցի ու Կապանցի մշակները կը ծաղրեն կառավարական արգելքները, բայց անոնք զինուած են միշտ ու Սասունցիներուն հետ կ'ընծայեն միակ պատերազմիկ տեսակը, որ ուրիշ տեղեր չըկայ: Բայց երբէք ապահովութիւն չըկայ որ անոնք անարգել գառնան լեռներնին ու ճամբան վրտանգաւոր յարձակումներ չը կրեն:

Բռնի իսլամացումները Հայերուն գոյութեան ա՛լ աւելի մեծ ու անմիջական սպառնալիք մ'են: Շատ մը գաւառներ, Հայերը ցանցնուած, կորսուած ու խեղդուած են մեծ թիւով համախառնած իսլամներու մէջ: Պատր. Փոխանորդ մը սոսկալի տեղեկութիւններ կուտայ իր թեմին վրայ, ուր բոլորովին մեկուսացուցուած ընտանիքները

բռնի իսլամացուցած են, առանց դարձի յոյսի: Արգէն Շէրիի օրէնքով ամեն միւսլիման (ծննդով կամ իսլամացումով) որ կրօնքը կը փոխէ, պէտք է սպաննուի ամեն բարի հաւատացեալի կողմէ: Հետեւաբար տաճկացած Հայերը բնաւ չեն կրնար նորէն քրիստոնէութեան դառնալ, դանակէ կամ սուրէ չ'անցնելու համար: Եւ որովհետեւ, Թուրքիոյ մէջ դաւանութիւնը կը շփոթեն ազգայնութեան հետ, իսլամացող Հայերը կը դադրին հայ ըլլալէ ու կը կորսնցունեն իրենց ազգայնութիւնը. ուրեմն, իսլամացումը ջարդին չափ ապահով միջոց մ'է բնաջնջելու Հայերը զատ՝ սեղով և ազգով, որոնց, նախնի Սուլթանները շնորհած էին մասնաւոր իրաւունքներ ու արտոնութիւններ, ամենքն ալ հաստատուած Ապտ-Իւլ-Համիդէ, հանդիսաւորապէս երաշխաւորուած Գրան ու եւրոպական կառավարութեանց միջև կնքուած դաշնագրերով:

Ըսել է թէ՛ Ամեն. Օրմանեանի ցոյց տուած շարժաւիթները բաւական ծանրակշիռ են ինքնին ու հարկ չ'կայ փնտռելու նաև ուրիշներ:

Այս պատրիարքը, հաշտարար բընաւորութեամբ, հայ կաթողիկ, Հռովմ սովբած՝ բաղադրութեանց արուեստը, դեռ ի՞նչ ազգային եկեղեցիին գիրկը չը դարձած, իրաւ է որ դէպքերը չը շտապեցուց: Անի 1896 Նոյեմբերին ընտրուած էր եղերական պարագաներու մէջ, մէկնումէն ետքը Մատթէոս Իզմիրլեանի, որ ջարդերուն ատեն Սուլթանին նկատմամբ իր բռնած անյողգող դիրքը վճարեց իր ազատութեամբ և որ միշտ արգելափակ է Պաղեստինի վանքի մը մէջ:

Այդ վայրկենէն ի վեր, անի բանակցած է, իր նուազ ծայրահեղ նկարագրին համեմատ, ճեռք բերելու համար խժգժութեանց դադրիլը, ու արդէն շատ անգամներ ուզած է հրաժար-

րիւ կամ թէ հրաժարիւ ուզել հասկը-
ցուցած է:

Սակայն իր հրաժարականի ուրիշ
գաղտնի պատճառներ կը վերա-
գրուին:

Ոմանք կ'ըսեն թէ՛ Պալատէն իբր թէ
հրաման է ստացեր արգիւելու: Ի Պրիւսէլ
գումարումը հայասէր համաժողովին:
Որքա՛ն ալ արտաւոյց մ'ըլլայ օսմանցի-
ներուն վեհապետը, չը կրնար իր Տըտ-
քէն իսկ անցուցած ըլլալ թէ՛ Ֆրան-
սացիներ, Գերմանացիներ, Անգլիացի-
ներ, Դանիացիներ, Հոլանտացիներ,
Պելճիքացիներ, — որոնք բնաւ կա-
խում չ'ունին Գում-Գարուի Պատրիար-
քէն — կարելի ըլլար վախճընել անկէ
զրկուած մէկ հովուական նամակով:

Ո՛չ ալ պէտք էր յուսալ թէ Օր-
մանեան Պատրիարքը — ամենէն աւե-
լի գիտող իր հոգևարիկ ազգի՛ն մեծ
տագնաւոր —, համարձակէր մատնել
հայկական դատը յայտարարելով թէ
Հայերը կը վայելէին ամենակատար-
եալ ապահովութիւն ու լիակատար եր-
ջանկութիւն, շնորհիւ բարութեան ու
անսպառ գթութեան Ն. Կ. Վ. Ապտ-
իւլ-Համիդի:

Թանին մէկ հեռագրին համեմատ,
իբր թէ Պատրիարքը բոլորովին իր ու-
զելովը չ'է գործեր. ստիպուեր է ե-
ղեր քաջուելու, իր կզերի մէկ մասին
ու իր աշխարհական Խորհուրդներուն
փողմէն, որոնք Օգոստ. 2էն ի վեր,
գրեթէ բանտած փակած են ելեր
զանի իր բնակարանին մէջ ու արգի-
ւեր են ետ առնելու իր հրաժարա-
կանը: Իր նախորդներէն մէկը, Ա.
մեն, Խորէն Սրբազան Աշըղեան, պար-
տաւորուեցաւ գահը թողուլ, հակա-
ռակ Դրանը թախանձանքին, լոկ իր
անձնական ապահովութեան համար.
1895 տարուան սկիզբը, շատ մը թե-
մերու մէջ ա՛լ չը յիշատակուեցաւ ա-
նոր անունը, ու միւսնոյն տարուան
Մարտին, երիտասարդ մը փորձեց

սպաննել զանի «իբրեւ մասնիչ»: Եր-
բէք այդպիսի ամբաստանութիւններ
չ'ըրին, Օրմանեանի գէմ, որ մատնիչ
մը չ'է անշուշտ. կը մեղադրուի միայն,
չափէն աւելի կապուելուն համար Պա-
լատին: Շատ վայելուչ չ'էր որ իր եղ-
բայրը Երևոյցի բժիշկի աստիճան
առնէր, ու շատ մը եկեղեցական-
ներ ալ, պատրիարքարանին գի-
ւաններուն մէջ կարևոր պաշտօններու
տէր, իրեն նման օսմ. պատուանշան-
ներ ընդունէին: Մատթէոս Իզմիրլեան,
ընդհակառակն, պահելով իր բարձրու-
թիւնը, միշտ մերժած էր այդպիսի
շնորհները:

Բայց արտաքին ճնշումի մը պէտք
չը կար Օրմանեանէն բրջնելու համար
որոշողութիւն մը, զոր գէպքերը կը
հրամայէին իրեն, Բ. Դրան ու Գում-
Գարուի պատգամաւորներուն միջեւ
1862ին միաձայն հաւանութեամբ հաս-
տատուած հայ ազգին ներքին Սահմա-
նադրութիւնը չ'էր թոյլ տար իրեն
ուրիշ կերպ գործել, եթէ իրօք ինք
կը յարգէր անոր ոգին: (1)

(Շարունակելի)

(1) ԾԱՆ. ԽՄԲ. Այս սողերը մեզի ի-
բաւուր կուտան հոս բառ առ բառ արտա-
գրելու հին ՆՈՐ ԿԵՍՆՔ ին առաջնորդողէ
մը քաղուած հետեւեալ հատուածը, որ միշտ
այժմէութիւն կը մնայ, քանի որ միշտ նոյն
կամայականութիւնն է բացարձակ տիրա-
պետը մեր Եգիպտոսի ազգային գործերուն
մէջ, շնորհիւ Գեր. Այվազեանին, որ աւան-
դապահն ու գործադի՛րը պիտի ըլլար մեր
Ազգ. Օրէնքին.

«Սահմանադրութիւնը սուլթաննե-
րէն շնորհ մը չ'է մեզի: Գրաւոր օրի-
նացումն է ազգային աւանդութիւննե-
րու որոնք անյիշատակ ժամանակներէ
ի վեր անվթար պահպանուած են, ո՛վ
որ ալ եղած ըլլայ հայ ազգին վրայ
տիրող օտար իշխանութիւնը: Մեր նա-
խորդ սերունդները շատ խելացի և
հեռատես գտնուեցան օրինական կեր-

պարանք տալով այս աւանդութիւն- ներուն որով զանոնք անմատչելի ըրին նոյն իսկ «Թիւրիմացութեան»:

Հայ ազգը եթէ իր նիւթական կեանքը տնօրինելու ազատ չէ, սակայն գոնէ իր մտաւորական ու բարոյական զարգացումին տէրն է շնորհիւ Սահմանադրութեան: Սահմանադրութիւնը ազգային ինքնավարութեան կէտն է. անոր ձեռք դպցնել չըլլար:

Շատ եղան, ու զօրաւորնե՛ր, Սահմանադրութեան դէմ՝ դաւադիր- ները, բայց միշտ յաղթուեցան, վասն զի իրենց հակառակորդներ ունէին ամէն հրապոյրի դէմ՝ ըմբոստ երեսփո- խաններ: Յիրուցան, վտարանդի տա- րագիրներ են հիմա ազգային իրա-ւունքներուն ախոյեաններէն շատերը, բայց աքսորուած չեն իրենց մտքերն ու սրտերը. ո՛ւր որ ալ ըլլան, արթուն կը հսկեն հայրենի ժառանգութեան մնացորդներուն վրայ: Այն օրը որ Սահմանադրութեան վաճառումը կա- տարուած իրողութեան մը վերածել ուզուի, գերագոյն Արդարութիւնը որ ժողովրդին հոգիէն կը բղխի, «կեցէք» պիտի ըսէ: Այս ճշմարտութիւնը թող չմոռցուի Պոլսոյ պատրիարքարանին մէջ. ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ»

**ՄԵՐ ԹԵՐԹԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ
ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ**

Ամենէն աւելի հայ թերթերն են որ կը գանգատին իրենց բաժանուղի- ներուն ձեռքէն: Մեր Արտասահմանի մամուլին մեծագոյն մասը գրեթէ՝ ամեն անգամ լոյս բերելու համար իրեն թերթը կամ պարբերականը՝ ահագին ճգնաժամեր կ'անցնէ: Տարին տասներ- կու աւելի իր բաժանորդները կը հրաւի-

րէ, կը խնդրէ անոնցմէ իրենց ընդունած թերթին բաժնեգիրը վճարել: Ու այս ստիպուած է ընելու հայ Խմբագիրը իբրև իրեն միակ և վերջնական միջոցը: Հայ բաժանորդը չ'լսեր եւ մինչև անգամ, հաւատացէ՛ք, չ'կար- դար այն ազգերը որոնք գրելու ատեն հայ Խմբագիրը՝ սրտէն արիւն կը հո- սեցնէ: Ունեցած ըլլալու է այդ պաշտօնը, կարենալ զգալու, երևակա- յելու համար այն տազնապը, ստոր- նացումը որուն ենթարկուած է նա յա- մօթ զինք կարգացողներուն:

Ո՞վ է իսկապէս յանցաւորը: Անպարտաճանաչ բաժանորդներն անգամ մեր մամուլի վարիչներուն զըր- կուիլը պիտի հաստատեն ինծի հետ, ա- պահովաբար:

Եւրոպական թերթերը, նոյնիսկ ճաբոնականները, որոնք տասնեակ հա- ջարներով կը տպուին, տարին անգամ մը միայն հրաւէր կ'ընեն բաժանորդա- գրութեան, ան ալ յիշեցնելու համար բաժանորդներուն որ իրենք այլ եւս գաղթած են Խմբագրին վրայ իրաւունք ունենալէ: Շատ պարզ է ըսել որ եւ- րոպացի մամուլի ներկայացուցիչները կը դանձեն նախ և ապա կը վճարեն: Բացարձակապէս հակառակն է այդ մեր մէջ:

Ու երբ օրին մէկը հայ Խմբագի- րը՝ պարտ բերու տակ ճնշուած՝ կ'ստիպ- ուի դադարեցնել իր թերթին հրատա- րակումը, Աստուած իմ, ինչե՛ր չ'էք լը- սեր անոր բարոյականին, անոր բարքին ու վարքին դէմ:

Ատոնք գալափար անգամ չ'ունին, աչքի առջև իսկ չեն կրնար ունենալ այն աշխատութիւնները՝ որ կը թափուին, կը գործագրուին հրապա- րակ հանելու համար այն թերթի կը- տորը, զորս շատ անգամ ձեռքէ ձեռք խլելով, մէկ քանի վայրկենի մէջ կը կարգանք, կը նետենք մէկ կողմ:

Մենք նպատակ չունինք երբքէ

ժանօթացնելու հայ բաժանորդը հայ խմբագրին՝ իբրև թերթի վարիչ-հրատարակիչ՝ քաջած ներքին կեանքին հետ: Նա չ'հետաքրքրուիր անով: Եթէ կեանքին մէջ մէկ քանի վայրկեան անոր վիճակով զբաղուէր, արդէն չէր գտնուէր նա այսօր այն կացութեան մէջ, ուր ա՛լ աւելի քան երբէք կը թապլտկի: Ոչ, այդ չէ մեր նպատակը:

* * *

«Փիւնիկ» իր վերջին թուով կը յայտարարէ որ այլևս թերթ չ'պիտի զրկէ արտասահման, որովհետև իր 250 է աւելի բաժանորդները երկու տարի շարունակ զայն ստանալէ վերջ դեռ չեն վճարած իրենց պարտքերը: Պատիւ մըն է ասիկա, շիտակը, որ հրապարակաւ կ'ըլլուի կոր մեր ամեն վճարել չ'սիրող, ճրիակներ ընթերցողներուն: «Փիւնիկ»ը չէ միայն այդ դժբաղդութեան զոհը: Ես առիթ ունեցած եմ այցելելու ուրիշ խմբագրատուններ ալ, որոնք, ցաւելով կ'ըսեմ, նոյն վիճակին մէջ տեսած եմ: Մեր խմբագիրները իրենց բաժանորդներուն զոհերն են:

Ուրիշ բառերով. այն անհատը որ մտքին դրած է բաժնեգիրը կանխիկ չ'վճարել այն թերթին որուն բաժանորդը եղած է կամ պիտի ըլլայ, թող զանիկա մերժելու ազնուութիւնն ունենայ, վատութիւն, ստորնութիւն է խաբելը:

Եւրոպացի խմբագիրը իր պարբերականին, կամ հրատարակած լրագրին փոխարժէքը չ'ստացած չը զրկեր զայն իր յաճախորդին: Եւ պարտաճանաչ ալ է անոր բաժանորդը: Հայն ալ գիտէ միևնոյն բանը ընել երբ գիմացինը հայ մը չէ, օտար է:

Երբ «Փիւնիկ»ի բաժանորդներուն ցանկը աչքէ կ'անցունեմ, հաւատացէք այնպիսի անուններ կը կարդամ հոն, ուր

կան մարդիկ որ մի քանի եւրոպական թերթեր կ'ստանան և որոնց abonnement ներուն mandatsները ես իմ ձեռքովս լեցուցած եմ. և որոնց պահանջքին կողմը բաց կը մնայ սակայն «Փիւնիկ»ի բաժանորդաց տումարին մէջ: Ինչո՞ւ:

Պատասխանը իմ հետս դուք ալ չ'պիտի կրնաք տալ կ'արժեմ:

Ի՞նչ կուզէիք որ ընէր «Փիւնիկ»ի խմբագիրը ատոնց ուէմ, ատոնց համար: Նա ատոնց երեսէն օր մըն ալ ճարահատ պիտի ընկրկէր անշուշտ եւ շատ բնական ալ է:

«Փիւնիկ» ամեն շաբթու իր այդ ճրիակներ 250 բաժանորդներուն համար վճարած է երկու տարիէ ի վեր շաբաթը 50ական զրոյ, Թղթատարական վարչութեան, թերթը իրենց պատկանած տէրերուն հասցնելու համար: 104 շաբթուան համար վճարած է հետևաբար 5200 զրոյ. կամ 1300 ֆր: Ու ասիկա մի միայն յիռալի ծախք, երևակայեցէք: Աւելցուցէք եւ ասոր վրայ լրագրին արժէքը 6200ֆր. պիտի ունենաք 7500 ֆր. ի պատկառելի գումար մը: Ու այսօր «Փիւնիկ»ի խմբագրութիւնը այսպէս սով իր թերթին յարատևող ապագային առջև կրնայ ունեցած ըլլալ ահագին խոչընդոտ մը:

Այո՛, կը կրկնեմ, գումար մըն է ասիկա զոր վերոյիշեալ ճրիակներները հաւաքաբար՝ անպատկառօրէն իւրացուցած են:

Չ'են կրնար առարկել որ ստացած չ'ըլլան: Թղթատարական վարչութիւնը ետ կը վերագարձունէ՝ իր հաշույն այն ամեն expeditionը որ իր destinationը չէ հասած ո՛ր և է պատճառով: Նոյնպէս իւրաքանչիւր տէրութեան Թղթատունները ետ կը զրկեն ձրի այն ամեն թերթերը, որոնք բաժանորդներուն կողմէ մերժուած են: Իրականութիւններ, անուրանալի ճշմարտութիւններ են ասոնք:

Ու այն պահուն որ «Փիւնիկ»ի խմբ-

բազմատունը այցելելով ամի յափոյ այս տողերը կը նետեմ թղթի կտորի մը վրայ, չեմ կրնար զզուանօք չնայիլ այդ 250 է աւելի անուանց յանկին, որոնք իրենց նմաններուն հետ կը կազմեն հայ օրագրութեան սե ճակատագիրը, հայ ազգին յետադիմութեան անուղղակի կերպով սատարողները, եւ, հետեւաբար ազգին թշնամիները, մարդկութեան վատերը:

Վ. Վ. ՇԱՄԼՐԵԱՆ

ՄԱՅՐԻԿ

Ճրտեսութիւն, Մայրի՛կ, ա՛խ, մա՛յր անուշիկ,

Ճրտեսութիւն, թէ որքան վերջ, չը գիտեմ

Պատուհանէն մեր տանիքը կը դիտեմ, վա՛խ քեզ, խեղճ մայր, վա՛խ, հծծելով ես յուշիկ:

Թերեւս հիմա դո՛ւ ալ՝ ինձ պէս հեռուէն, Պատուհանին յեցած դէմքդ, կարտասուես, եւ աչքերով՝ աղօտացած արցունքէն, Շոգենաւին խօլ գնացքը կը դիտես: Շոգենաւին՝ որ զաւակդ կը տանի. վերջին երկայն համբոյրով դեռ չը զբուռած

Ի գուր թեւերդ թերեւս ինձ կերկարես. կ'իյնան անոնք, գալարումէ ալ յոգնած: Ու կը խղզեմ արցունքի յորդ հեղեղներ, Որոնք ցաւը կ'ուռեցնէ կուրծքիս տակ: Անէծքներս ալ, ա՛խ, բարկութեան զերթ շանթեր

Կ'երթան մարիլ ծով ցաւիս մէջ անյատակ:

Մայրի՛կ, ո՛րքան պէտք ունէի քու զրկիդ, Բանի՛ օրեր երազեցի հանգչեցնել Յոքնած գլուխս, մանկան մը պէս, քու ծնկիդ,

Համբոյրներուդ օրօրներովը ննջել: Աւա՛ղ, հիմա... Ի՞նչ, չի գրկած թողուլ քեզ,

Աստուած, թէ որ իմ սիրտս կ'զգայ այսօր քան ցաւ,

Դո՛ւն ի՞նչ կ'զգաս, Մայրի՛կ, ա՛խ, մա՛յր սիրակէզ,

Դո՛ւն ի՞նչ կ'զգաս... Չէ՛, չ'եմ ուզեր խորհիլ, բա՛ւ:

Մի՛, հէ՛զ մայր, մի՛ մի՛ լա՛ր, խորհէ՛, քեզ նման

Քանի՛ մայրեր կան, որ ա՛լ յոյսն իսկ չունին

Համբոյր մը սոսկ տալու զաւկին սիրական,

Քանի՛ մայրեր, որոնց հատորքը սրտին, Իրենց զրկէն, իրենց ծոցէն խլուեցան Ու նետուեցան, եղեռնի ծո՛ցը անձայն: Խորհէ՛ անոնց, այդ մայրերուն, ու մի՛ լար Տարիները շուտով կ'անցնին ու կրկին Արցունքներով ժպտով զրկենք մենք զիրար,

Այս ցաւը՝ մեզ չի մնար.

Իսկ անէծքը, պիտ'մնայ միշտ մայրեր տանջող Հրէշին

ՀԱՅԿ

ԳՈՂ ՄԺԴՅՈ

Գաւառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մամշով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արախտ տպարանէն: Բաժանորդագրուիլ փափագողները 5 շրշ. ի նամակագրօջմ կրնան շրկել Փիւնիկի հասցէին:

Ա Ձ Պ

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զսպասուցիչ եւ դիւրամտջելի պայմաններով:

Փափագող: Երբ դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

ԱՐԱՔՍ

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն եւ թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, խիՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ: